

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արև Վաչագանի Ղազարյան

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Казарян Арев Вачагановна

ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ ЛИЦ ИМЕЮЩИХ  
ИНВАЛИДНОСТЬ В РА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. “Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

Ереван-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ **Վ. Ն. Այվազյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների  
դոկտոր **Ռ. Խ. Հակոբյան**

իրավաբանական գիտությունների  
թեկնածու **Գ. Ս. Մուղնեցյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման  
ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի  
մարտի 13-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, Երևանի պետական համալսարանում գործող  
ԲՈՂ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.  
Երևան, Ալեք Սանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի փետրվարի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավ. գիտ. դոկտոր., դոցենտ

**Վ. Դ. Ավետիսյան**

Тема диссертации утверждена в Ереванском Государственном Университете  
Научный руководитель: кандидат юридических наук,

доцент **В. Н. Айвазян**

Официальные опоненты:

доктор юридических наук **Р. Х. Акопян**

кандидат юридических наук

**Г. С. Мугнецян**

Ведущая организация: **Государственная академия управления РА**

Защита состоится 13-го марта 2015г. в 14<sup>30</sup> часов на заседании Специального  
совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном  
университете (0025, г. Ереван, ул. Алека Манукиана 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников  
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11-го февраля 2015 года.

Ученый секретарь специализированного совета,  
доктор юридических наук, доцент

**В.Д. Аветисян**

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

### Ատենախոսության թեմայի արդիականությունը.

Յուրաքանչյուր պետության հիմնական պարտականությունն իր քաղաքացիների արժանապատվության հարգումն ու պաշտպանությունն է: Այդ խնդրի իրականացման համար պետությունը ոչ միայն պետք է իր քաղաքացիներին զերծ պահի խտրական վերաբերմունքից, այլև ապահովի արժանավայել կյանքով ապրելու համար անհրաժեշտ պայմաններ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ նաև սոցիալական պետություն է: Սահմանադրական այս նորմից բխում է, որ պետությունը պարտավոր է իր բոլոր քաղաքացիների համար սոցիալական ապահովության, ապահովագրության եւ պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ պահովել:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավական կարգավիճակը ամրագրող նորմատիվային դաշտը բխում է ՀՀ Սահմանադրությունից (հոդված 37), որը յուրաքանչյուր մարդու ընձեռնում է ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Բացի այդ, երկրի հիմնական օրենքը սոցիալական ոլորտում պետության առաջնահերթ խնդիրներից մեկը համարում է հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը (հոդված 48, 7-րդ կետ): ՀՀ Սահմանադրությունը (հոդված 14), մարդու արժանապատվությունը համարելով բարձրագույն արժեք, ամրագրում է իրավահավասարության սկզբունքը (հոդված 14.1), որն արգելում է խտրականության ցանկացած դրսևորում՝ կախված մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ հաշմանդամությունից:

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2013 թ. սկզբին երկրում հաշվառված են 186384 հաշմանդամություն ունեցող անձինք, որոնցից 87419-ը կամ ընդհանուրի 46.9 տոկոսը կանայք են<sup>1</sup>:

ՀՀ օրենսդրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված են արտոնությունների որոշակի համակարգ՝ սոցիալական պաշտպանության և սոցիալական ապահովության տեսանկյունից: Այնուհանդերձ, մեր երկրում առկա են հաշմանդամության իրավական և սոցիալ-տնտեսական փոխառնչվող մի շարք գործոններ, որոնցից թերևս ամենախոցելին հաշմանդամություն ունեցող անձանց արտահայտված սոցիալական խնդրահարույց իրավիճակն է: Մեր երկրում դեռևս առկա չէ անհրաժեշտ իրավական կառուցակարգերի ամբողջական և գործուն համակարգ՝ իրավական ու գործառնական հիմքերով, և այս իրավիճակում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման պետական կարգավորումը էապես հենված է փոխհատուցումների քաղաքականության վրա:

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվարին», ՀՀ ԱԿՕ, Երևան, 2013թ., 131 էջ:

Ելնելով վերոգրյալից՝ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում արդիական ու հրատապ է դառնում ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ազգային օրենսդրության վերլուծությունն ու կատարելագործման ուղիների բացահայտումը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը ներկայացված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

*Հետազոտվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը.*

Շուկայական տնտեսության պայմաններում, ի տարբերություն վարչահրամայական համակարգի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը բազմամակարդակ են և պահանջում են մի շարք ոլորտների՝ զբաղվածության, սոցիալական ապահովության, կրթության, կենսագործունեության և այլն, այնպիսի համապարփակ կարգավորում, որ իրավունքների պաշտպանության համակարգում արդյունավետ ներառվի նաև մասնավոր հատվածը: Այս առումով խորհրդային ժամանակաշրջանի իրավագետների հետազոտությունները ներկայումս արդիական չեն կարող լինել:

Ատենախոսության շրջանակներում քննարկված խնդիրների բազմակողմանի, համալիր ուսումնասիրություն հայ իրավագետների կողմից դեռևս անհրաժեշտ մակարդակով առայսօր չի կատարվել: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքի և գործունեության հիմնախնդիրների կամ դրանց հարակից հարցերի առանձին ասպեկտները լուսաբանվել են Գ. Հ. Ղարախանյանի, Տ. Կ. Բարսեղյանի, Ա. Մ. Հայկյանցի, Հ. Ա. Ստեփանյանի, Հ. Հ. Հակոբյանի, Գ. Կ. Կուտոյանի կողմից: Այնուամենայնիվ, կատարված անդրադարձերում, որպես կանոն, հաշմանդամությանն առնչվող իրավակարգավորումները չեն դիտարկվել որպես հիմնական խնդիր:

Սույն աշխատության մեջ քննարկված մի շարք հարցեր ուսումնասիրվել են հատկապես արևմտյան և ռուս իրավագետների կողմից:

*Հետազոտության օբյեկտը.*

ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ զբաղվածության, սոցիալական ապահովության, կրթության, կենսագործունեության այլ ոլորտներում կառուցակարգային և իրավագործառության հիմնախնդիրներն են և հաշմանդամների իրավունքների ու սոցիալ-տնտեսական զարգացումների ներհամակարգային կապերը:

*Հետազոտության առարկան.*

Հաշմանդամություն ունեցող անձանց սահմանադրաիրավական և վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ տեսագործական պատկերացումներն են, ինչպես նաև ՀՀ-ում երևույթի նախադրյալները, կառուցակարգերի պրակտիկան և իրավական կարգավորումը:

*Հետազոտության նպատակը և խնդիրները.*

Ներկայացվող ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել և գնահատել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ՀՀ ազգային օրենսդրությունը՝ համեմատելով միջազգային իրավական նորմերին և չափանիշներին, ինչպես նաև՝ հետազոտությունների արդյունքում տեսական,

գործնական և օրենսդրական հիմքերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումն ու առաջադրումը:

Ներկայացվող ատենախոսության խնդիրներն են՝

- ուսումնասիրել հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների ինստիտուտի տեսագործական հիմնադրույթներն ու իրավափիլիսոփայական հիմքերը՝ նպատակ հետապնդելով համակարգել արդի հիմնարար թեզերը, առաջարկել սեփական մոտեցումներ և դրանք թիրախավորել ատենախոսության մեջ ուսումնասիրվող խնդիրների և առաջարկվող լուծումների հիմքում,
- ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը՝ նպատակ հետապնդելով ներկայացնել այդ անձանց իրավունքների ապահովման առանձնահատկությունների տեսագործական նկարագիրը,
- վերլուծել ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման օրենսդրությունը և համեմատել միջազգային իրավունքի նորմերի պահանջների հետ՝ նպատակահարմար համարելով գույքագրել միջազգային փորձից առանձնացված նորովի, մեր երկրում դեռևս չկիրառվող լուծումները,
- բացահայտել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրման (ներառման) արդի հիմնախնդիրները ՀՀ-ում,
- վեր հանել ու զնահատել ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման օրենսդրական անհամապատասխանություններն ու բացերը,
- մշակել ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական լուծումները:

*Հետազոտության նորմատիվ-իրավական և փորձաքնական հիմքերը.*

Հետազոտության համար նորմատիվ-իրավական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ աշխատանքային և ընտրական օրենսգրքերը, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Զբաղվածության մասին», «Կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքները, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, ՀՀ կառավարության որոշումները, այլ ներպետական, միջազգային ու օտարերկրյա նորմատիվ-իրավական ակտերը:

Ուսումնասիրված առանձին հարցերի վերաբերյալ կիրառվել են նաև տեսաբան-իրավաբանների, ՀՀ կառավարության համապատասխան ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքները:

Ատենախոսական աշխատանքում կատարված եզրահանգումների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է հետազոտության թեմայի վերաբերյալ օրենսդրության և մասնագիտական գրականության վերլուծությամբ, ինչպես նաև ՀՀ-ում համշամդամություն ունեցող անձանց

իրավունքների իրացման վերաբերյալ գործնական նյութերի ու զեկույցների դիտարկմամբ:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է նրանում, որ այն հայրենական մասնագիտական գրականության մեջ առաջին համակարգված, համակողմանի ուսումնասիրությունն է՝ նվիրված շուկայական տնտեսահամակարգում և իրավական պետության ձևավորման պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին: Առաջին անգամ փորձ է արվում հետազոտել և իմաստավորել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքի ինստիտուտը որպես երևույթ և վերջինիս իրավական կարգավորումը ՀՀ-ում՝ տալով համապատասխան հասկացությունների իրավական բնորոշումը և վեր հանելով իրավական կարգավորման անորոշությունները, բացերը՝ առաջարկելով վերջիններիս նոր՝ նախկինում կիրառություն չունեցող ամբողջական լուծումներ:

Ելնելով վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունից՝ մշակվել և ներկայացվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կատարելագործմանն ուղղված օրենսդրական և գործնական մի շարք առաջարկներ, որոնք կարող են նպաստել այդ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը:

Ատենախոսության նպատակի և խնդիրների իրականացման արդյունքում ձևավորված գիտական եզրահանգումների հիման վրա պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները հանգում են հետևյալին.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանը պետք է հենվի իրավունքի գերակայության և հուսալիության երաշխավորման, պետական երաշխիքների տրամադրման, սոցիալական ծառայություններ ստանալիս հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց անհատական պահանջումների հաշվառման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության երաշխավորման հետևյալ սկզբունքների վրա:
2. Կազմակերպության լուծարման և դրա գործունեության դադարեցման դեպքում աշխատանքային խեղման հետևանքով աշխատողներին պատճառոված վնասի փոխհատուցման հարցը ներկայումս ՀՀ օրենսդրությամբ ամբողջական կարգավորված չէ: Մասնավորապես, կարգավորումից դուրս են մնացել նշված դեպքում միջոցներ կամ իրավահաջորդ չլինելու պատճառով աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի կամ մասնագիտական հիվանդությունների արդյունքում աշխատողներին պատճառոված վնասի փոխհատուցման գումարների վճարման հետ կապված հարաբերությունները: Ներկայացվող խնդրի լուծումը կարող է ապահովվել համապատասխան պարտադիր ապահովագրական համակարգի ներդրմամբ:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմանների սպաստված նպատակով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված արտոնությունների իրավակիրառական տեսանկյունից, կարծում ենք, որ ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրումը, հումքի ձեռքբերման և արտադրանքի իրացման գործում օժանդակությունը վկայակոչված օրենքում լրացուցիչ հստակեցման, իրականացման կոնկրետ կառուցակարգերի սահմանման օբյեկտիվ անհրաժեշտություն ունեն առնվազն հետևյալ հիմնական ուղղություններով նշված պետական աջակցության կոնկրետ ձևեր, եղանակներ, չափեր, ժամկետներ, հաճախականություն, շահառուների առաջնահերթությունների սահմանում: Մյուս կողմից, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն ուղղված պետական աջակցությունը օբյեկտիվորեն պետք է ենթադրի նաև ֆինանսական միջնորդության շրջանակներում պետական երաշխիքների առաջնահերթ տրամադրում, փոխառության տոկոսադրույքի նվազեցման միջնորդություն, կազմակերպության գրանցման և պետական վերահսկողության դյուրին ու տարբերակված վարչարարության սկզբունքների սահմանում:
4. Կրթության ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական արդյունավետ ներառման տեսանկյունից անհրաժեշտ է իրական երաշխիքներ ստեղծել առանձնահատուկ կարիք ունեցող անձանց կրթությունը ապահովելու համար: Այդ առիթով, ըստ վարչական տարածքների անհրաժեշտ է կատարել հաշմանդամություն ունեցող երեխաների ամբողջական հաշվառում և նրանց թվին համապատասխան պատրաստել կադրեր տնային ուսուցումը պատշաճ կազմակերպելու նպատակով: Տնային ուսուցման նպատակով անհրաժեշտ է նաև սահմանել հարկային արտոնությունների համակարգ, ինչպես նաև պատշաճ վերահսկողություն իրականացնել ուսումնական հաստատությունների շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ամրագրող օրենսդրությունը պետք է ապահովի գերազանցապես անուղղակի արտոնությունների համակարգ, երբ ավելի փոքր ծախսերով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նյութական, բովանդակային և կազմակերպչական հասանելիությունը խթանվում է կրթական հաստատությունների միջոցով, այլ ոչ թե բացառապես պետության կողմից ուղղակի ֆինանսավորմամբ հատուկ կրթական հաստատությունների ստեղծմամբ:
5. Առողջապահության և վերականգնման ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման շրջանակներում առաջարկվում է օրենսդրությամբ սահմանել, որ այն բուժական հաստատությունները, որոնք կպարտավորվեն անվճար իրականացնել տարեկան որոշակի քանակով հաշմանդամություն ունեցող անձանց պետական պատվերից դուրս բուժական ծառայությունների տրամադրում, պետության կողմից այդ

հաստատություններին կտրամադրվեն շահութահարկի արտոնություններ: Անհրաժեշտ է նաև վերացնել առողջապահական համակարգում հաշմանդամություն ունեցող անձանց արտոնություններում 1-ին և 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամների առկա տարբերակումները:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է պետական բյուջեում լրացուցիչ նպատակային եկամուտների ձևավորման համար ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական մարմնի միջոցով պարբերաբար կազմակերպել ազգային պետական վիճակախաղ, որը պետք է ունենա լայն հասարակական հնչեղություն համակարգված իրագեկմամբ, քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց հանրային միջավայրում ներառման և կենսագործունեության մատչելիության խնդիրների շրջանակներում առավելապես առկա է երկու լուծման ճանապարհ: Նախ՝ շրջակա միջավայրի կամ այսպես կոչված «դիզայնի» գործակալների ինստիտուտի ներդրման նպատակով իրավակիրառական արդյունավետության բարձրացում, կառավարության համապատասխան որոշման առկայություն: Մյուս կողմից, մասնավոր հատվածում, առավելապես սպասարկող ընկերություններում և հանրային ծառայությունների ոլորտում անհրաժեշտ է ներդնել խթանային համակարգի իրավական հիմքեր:
8. ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են այնպիսի նորմեր, որոնք գործատուների համար կնախատեսեն համապատասխան պարտադիր քվոտաներ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու համար: Առաջարկվում է սահմանել քվոտա, որը պետք է ապահովվի գործատուի մոտ առաջացող թափուր աշխատատեղերի հաշվին՝ ՀՀ աշխատաշուկայի առաջարկի հնարավորություններից ելնելով:
9. Ատենախոսության մեջ սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները ապահովում են ամբողջական ու հասցեական թիրախավորում, որոնք համահունչ են ատենախոսական հետազոտության նպատակին և խնդիրներին:

*Ատենախոսության տեսական նշանակությունը.*

Հետազոտության արդյունքները կարող են կարևոր նշանակություն ունենալ իրավաստեղծ գործունեության ընթացքում: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ այլ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող բարեփոխումների, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող օրենսդրական լուծումների իրավափիլիսոփայական հիմքերի կատարելագործման աշխատանքներում:

Աշխատանքը կարող է տեսական հիմք հանդիսանալ դրանում արձարձված բազմաթիվ հարցերի գիտական հետազոտությունների համար: Աշխատանքի տեսական արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական նպատակներով:



Ատենախոսության գործնական նշանակությունը.

Հետազոտության հիմնական դրույթները կարող են կարևոր նշանակություն ունենալ իրավակիրառական գործունեության ընթացքում: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող ՀՀ օրենսդրության հետագա կատարելագործման, ինչպես նաև պրակտիկ իրավաբանների գործունեության և պետական քաղաքականության իրականացման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը.

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի հրատարակած չորս գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը.

Ատենախոսությունը կատարված է ԲՈՀ-ի կողմից սահմանված ծավալով, կառուցվածքը համապատասխանում է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ինը պարագրաֆներից, եզրահանգումներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը հավելվածով 160 էջ է, առանց հավելվածի՝ 154 էջ:

**Ատենախոսության հիմնական բովանդակությունը**

Ներածությունում հիմնավորվում է թեմայի ընտրության արդիականությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, ատենախոսության տեսական և նորմատիվ հիմքերը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը և արդյունքների փորձարկումը:

**Աշխատանքի առաջին գլուխը** վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավական կարգավիճակի արդի տեսամեթոդական խնդիրների ու զարգացումների ուսումնասիրությանը և նրանց սոցիալական պաշտպանության իրավական կառուցակարգերի միջազգային զարգացումների իրավահամեմատական վերլուծությանը:

**Առաջին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավական կարգավիճակի հասկացությունը, չափորոշիչներն ու բովանդակությունը»** ենթավերնագրում ներկայացվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների արդի խնդրահարույց դրույթները, նրանց իրավական կարգավիճակի հենայունները, այս շրջանակներում հիմնական հետազոտական թեզերը, ՀՀ-ում խնդրի մշակվածության աստիճանը, շտկման հիմնական ուղիները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շրջանակներում ՀՀ-ում թիրախված գիտական հետազոտություններ առկա չեն: Առանձին հայրենական գիտնականներ հարցին կատարել են հպանցիկ անդրադարձ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993թ-ի ապրիլի 14-ին ընդունված օրենքի 2-րդ

հողվածը տալիս է «հաշմանդամ» եզրույթի սահմանումը: Այստեղ ընդունելի չէ «հաշմանդամ» եզրույթի օգտագործումը, քանի որ այն ընդգծում է հասարակությունից մեկուսացվածության երևույթը, և անհրաժեշտ է կիրառել «հաշմանդամություն ունեցող անձ» տերմինը: Անհրաժեշտ է նաև օրենքով ամրագրված կարգավորումների համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի սկզբունքներին:

Ընդունելով, որ հաշմանդամությունը միայն անհատի խնդիրը չէ, այլ անձի առողջական խնդիրների և միջավայրի բազմաբնույթ արգելքների փոխազդեցության հետևանք, որը խոչընդոտում է անձի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը, անհրաժեշտ է սահմանել սոցիալական ներառման ուղղված պայմանները հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում՝ քաղաքաշինության, տրանսպորտի, տեղեկատվության, առողջապահության, զբավածության և այլն, ինչպես նաև հստակ տարանջատել պատասխանատվության շրջանակները:

***Երկրորդ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության իրավական կառուցակարգերի միջազգային փորձը. իրավահամեմատական վերլուծություն»*** ենթավերնագրում իրականացվել է խնդրի շրջանակներում միջազգային արդի զարգացումների ուսումնասիրություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից, մասնավորապես ուսումնասիրվել են Դանիայի, Գերմանիայի, Ավստրալիայի, Ավստրիայի, ՌԴ փորձը:

Միջազգային իրավունքի նորմերին համապատասխան հաշմանդամության հիմնախնդրի լուծմանը մոտենում են երկու տեսանկյունից. որպես պետության կողմից սահմանված երաշխիքներ՝ սոցիալական նպաստի և աջակցության տեսքով, և ակտիվ միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցմանը և աջակցությանը զբաղվածության ոլորտում: Խնդիրը կայանում է նրանում, որ ընդհուպ մինչև զարգացած երկրներում և հաստատապես նաև ՀՀ-ում պետության միջոցները երբեք լիարժեք չեն բավարարում հաշմանդամության հիմնախնդիրների լուծման համար: Այս տեսանկյունից, պետության պասիվ միջոցառումները ենթադրում են խթանային ինստիտուտի ներդրման իրավական հիմքեր, որոնք որոշակի հարկային արտոնությունների, պետություն մասնավոր համագործակցության և այլ շահադրդվածության կառուցակարգերի միջոցով կստեղծեն այնպիսի իրավիճակ, որ մասնավոր հատվածն ուղղակիորեն կնպաստի համաշխարհային հաշմանդամություն ունեցող անձանց համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Այս միջոցառվորված եղանակով պետության ծախսերը կլինեն ավելի զսպված և ժամանակի մեջ բաշխված:

***Աշխատանքի երկրորդ գլուխը*** վերաբերում է ՀՀ-ում աշխատանքի և զբաղվածության, կրթության, առողջապահության և վերականգնման, կենսաթոշակների և նպաստների տրամադրման, հանրային միջավայրում ներառման և կենսագործունեության մատչելիության ուղղություններում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման իրավիճակին

ու խնդիրներին:

**Առաջին «Աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակների և նպաստների տրամադրման ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման իրավիճակն ու խնդիրները»** ենթավերնագրում ներկայացվել է ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ու զբաղվածության, կենսաթոշակների և նպաստների տրամադրման գծով իրավունքների վերլուծություն, և տրվել են անհրաժեշտ իրավական լուծումների հիմնական հետազոտ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 27-րդ հոդվածում սահմանվում են հաշմանդամություն ունեցող և այլ անձանց հավասար հիմունքներով աշխատանքային իրավունքի դրույթները: ՀՀ օրենսդրությամբ՝ վերը նշված կոնվենցիայի վկայակոչված դրույթներում ներառված մի շարք հարցեր ենթարկված չեն անհրաժեշտ իրավական կարգավորման, ինչը նաև բխում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից: Այս եզրահանգումն առավել հիմնավորելու նկատառումով ստորև բերված են ՀՀ գործող օրենսդրությունից՝ խնդր առարկա հարցերին վերաբերող կոնկրետ մանրամասներ:

2013թ. դեկտեմբերի 11-ին ընդունված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքն զբաղվածության ոլորտի քաղաքականությունը ուղղորդել է բացառապես ակտիվ ծրագրերին, որի արդյունքում առավել արդյունավետ կարող է իրագործվել անմրցունակ խմբերի զբաղվածության մակարդակի բարձրացման նպատակը:

Քննարկվող հարցերի շրջանակներում հատկանշական է նաև, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող՝ «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2013 թ. ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված՝ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային ռազմավարությունը որևէ կերպ չեն անդրադառնում հաշմանդամություն ունեցող անձանց ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության հարաբերությունների կարգավորմանը:

ՀՀ-ում իրականացվող պետական աջակցության հիմնական ծրագրերից է ընտանեկան նպաստի վճարումը, որն իրականացվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով: Այս նպաստի տրամադրման հիմքում դրված է ընտանիքի անապահովության գնահատման անուղղակի մեթոդը: Նպաստի նշանակման հիմքում անհրաժեշտ է ավելացնել ընտանիքում հաշմանդամություն ունեցող անձի գործունի կշիռը:

ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը»: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ անհրաժեշտ է նախատեսել նաև սոցիալական դեպքի վարման միջոցով առավել նպատակային և կարիքներին համապատասխան

աջակցության տրամադրում հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքներին: Այս իմաստով, ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման համատեքստում անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձանց գծով սոցիալական դեպքերի վարումը պետք է իրականացվի առաջնահերթ:

**Երկրորդ «Կրթության, առողջապահության և վերականգնման ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման իրավիճակն ու խնդիրները»** ենթավերնագրում վերլուծվել է ՀՀ կրթության, առողջապահության և վերականգնման ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առկա իրավիճակը և առաջադրվել են լուծման ճանապարհներ:

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 35 հոդվածով: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն. «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»:

Գործնականում անհրաժեշտ է ամբողջական իրավական երաշխիքներ ստեղծել առանձնահատուկ կարիք ունեցող անձանց կրթությունը ապահովելու համար: Ակնհայտ է, որ կրթության իրավունքը հաշմանդամություն ունեցող անձի կողմից չի կարող իրացվել առանց իրավական որոշակի երաշխիքների ապահովման: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ շուկայական տնտեսակարգի ներկայիս մեզ առաջարկվող մոդելները հիմնված են կոշտ պայմանների վրա մրցունակության պահպանման պայքարի, պետության դերի նվազեցման և այլ գործոնների վրա: Այս պարագայում հաշվի չի առնվում հաշմանդամություն ունեցող անձանց անբարենպաստ «մեկնարկային դիրքը»: Խնդիրը կայանում է նրանում, որ մեր հասարակությունը, հրաժարվելով վարչաօրենսդրական տնտեսակարգից, դեռ չի մշակել սոցիալական պաշտպանության արդյունավետ ու գործուն կառուցակարգեր, որոնք կգործեն շուկայական տնտեսության պայմաններում: Այս պայմաններում որոշակիորեն օբյեկտիվ է, որ պետության միջոցները, անկախ տնտեսության զարգացվածության աստիճանից, առավել ևս Հայաստանում, չբավարարեն ուղղակի աջակցության ծրագրերի իրականացմանը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ամրագրող օրենսդրությունը պետք է ապահովի գերազանցապես անուղղակի արտոնությունների համակարգ, երբ ավելի փոքր ծախսերով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նյութական, բովանդակային և կազմակերպչական հասանելիությունը խթանվում է կրթական հաստատությունների միջոցով, այլ ոչ թե բացառապես պետության կողմից ուղղակի ֆինանսավորմամբ հատուկ կրթական հաստատությունների ստեղծմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահության գործընթացը յուրահատուկ է այն իմաստով, որ չի սկսվում այն պահից, երբ անձը ունեցել է առողջական խնդիրներ, այլ կա օբյեկտիվ անհրաժեշտություն այդ անձի

բուժման և/կամ վերականգնման գործընթացի անընդհատության: Մա լրացուցիչ խցեղիչություն է առաջացնում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքի ինստիտուտում: Այստեղ նույնպես առաջարկվում է օրենքով պարտադրել այս անձանց բացառապես անվճար բուժօգնության ստացումը: Ակնհայտ է, որ հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահությունը անվճար կազմակերպելը կախված է մեծածավալ ծախսերի հետ: Առաջարկվում է օրենսդրությամբ սահմանել, որ այն բուժական հաստատությունները, որոնք կպարտավորվեն անվճար իրականացնել տարեկան որոշակի քանակով հաշմանդամություն ունեցող անձանց պետական պատվերից դուրս բուժական ծառայությունների տրամադրումը, պետության կողմից այդ հաստատու- թյուններին երկարաժամկետ հիմունքներով անվճար տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց բուժական սպասարկման նպատակով տարածքներ: Մյուս կողմից՝ նպատակահարմար է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանել արտոնություններ բժշկական հաստատությունների համար՝ համամասնորեն նվազեցնելով շահութահարկը՝ կախված տարվա ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման ծավալներից:

Վերջապես անհրաժեշտ է վերացնել այն ոչ օբյեկտիվ տարբերակումը, որ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:

**Երրորդ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց հանրային միջավայրում ներառման խնդիրները. կենսագործունեության մատչելիությունը»** ենթավերնագրում վերլուծվել են ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձնաց համար շրջակա միջավայրի բարենպաստ պայմանների ստեղծման իրավական հիմքերն ու տրվել են լուծման մոտեցումներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրային միջավայրի մատչելիության ապահովման սկզբունքները ներառված են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Օրենքի 5.1 հոդվածով նախատեսված է սոցիալական ծառայությունների, վերականգնման տեխնիկական միջոցների պետական ստանդարտների, ինչպես նաև հաշմանդամների համար կենսագործունեու- թյան միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերի և կանոնների սահմանման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ: Որոշակի լուծումներ են տրված նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օենքի 43 հոդվածով, որտեղ սահմանված համայնքի ղեկավարի գործառույթներից են՝ հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը:

Այնուամենայնիվ, սոցիալական ներառման խնդիրը բարդ է ու բազմաշերտ, և Հայաստանը դեռ չունի համապատասխան իրավունքների լիարժեք իրացման ամբողջական օրենսդրական երաշխիքներ: Այստեղ խնդիրը կախված է բազմաթիվ գործոններից, ընդհուպ մինչև՝ բարոյախոզեբանական,

մշակութային և այլն: Ըստ էության, ատենախոսության մեջ ներկայացված բոլոր խնդիրների շրջանակներում առաջարկված լուծումները որոշակիորեն ներագրում են հաշմանդամություն ունեցող անձանց հանրային միջավայրում ներառման արդյունավետության բարձրացմանը: Հատկանշական է, որ Հայաստանում գրեթե ամբողջությամբ առկա է համապատասխան օրենսդրական դաշտը, սակայն գործնականում դեռևս խիստ հեռու ենք միջազգային չափանիշներին համարժեք հարմարեցված միջավայր ունենալուց: Այս տեսանկյունից առավելապես առկա է երկու լուծման ճանապարհ: Նախ շրջակա միջավայրի կամ այսպես կոչված «դիզայնի» գործակալների ինստիտուտի ներդրման նպատակով իրավակիրառական արդյունավետության բարձրացում, կառավարության համապատասխան որոշման առկայություն: Մյուս կողմից, հաշմանդամություն ունեցող անձանց համար շրջակա միջավայրի հարմարեցման նպատակով պետք է էապես զգալի պետական բյուջեից ուղղակի ծախսումները և սահմանել այդ հարմարեցմանը նպաստող կազմակերպությունների գծով հարկային արտոնություններ:

***Աշխատանքի երրորդ գլուխը*** վերաբերում է ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման օրենսդրական լուծումներին:

***Առաջին «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի նորմատիվի (քվոտայի) կիրառման լուծումները»*** ենթավերնագրում կատարվել է ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղերի նորմատիվի ներդրման ընդհանրական վերլուծություն և տրվել են դրա ներդրման իրավական լուծումները:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության արդյունավետության ապահովման տեսանկյունից ՀՀ գործատուների նկատմամբ իրենց աշխատողների թվի որոշակի տոկոսի չափով աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտայի կիրառման դեպքում, գործատուների հնարավոր տնտեսական ռիսկերի բացահայտումն ու դրանց մեղմման լուծումների առաջադրումը օրակարգային խնդիր է և պահանջում է իրագործելիության հիմնավորման տեսամեթոդական և իրավական հիմքերի հետազոտություն, կառուցակարգերի մշակում: Մասնավորապես, նկատի ունենալով ուսումնասիրված առանձին երկրների հաջողված փորձը և Հայաստանի զարգացման արդի առանձնահատկությունները, հնարավորինս բացահայտվել, վերլուծվել և գնահատվել են Հայաստանում քվոտայի կիրառման դեպքում գործատուների համար առաջացող իրավական, սոցիալական և տնտեսական ռիսկերը և առաջադրվել են դրանց մեղմման ու կանխարգելման ապահովմանն ուղղված իրավական լուծումներ:

Հայաստանում քվոտայի պահանջի ներդրման ընդհանրական սկզբունք պետք է հանդիսանա քվոտայի ամբողջական կիրառման փուլային տարբերակը: Հետևաբար, ՀՀ օրենսդրությամբ պետք է ամրագրվի նաև քվոտայի ներդրման և քվոտայի պահանջի տարածման հստակ ժամանակացույց՝ ըստ տնտեսության ոլորտների, պետական և ոչ պետական հատվածների, ինչպես նաև աշխատողների քանակի: Այս գործընթացները պետության կողմից պետք է ենթարկվեն այնպիսի օրենսդրական կարգավորման և հետևողական կառավարման, որը կստեղծի օբյեկտիվ և

ամբողջական հնարավորություններ քվոտայի պահանջի հիմնական նպատակի իրացման և այդ պահանջի կիրառման պարագայում գործատուների տնտեսական կորուստների կանխարգելման կամ այդ կորուստները նվազագույնի հասցնելու ուղղություններով:

Ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծությունների եզրահանգումների ամփոփ արդյունքներով առաջարկվել է ՀՀ-ում քվոտայի պահանջի իրավական ամրագրման հայեցակարգային հիմնական դրույթները:

Առաջին փուլում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող պետական և ոչ պետական կազմակերպությունների համար՝ աշխատողների ընդհանուր թվի 5 տոկոսի չափով: Երկրորդ փուլում՝ քվոտայի ներդրումից երկու տարի հետո, քվոտայի պահանջը սահմանվում է հարյուր և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական հատվածի, ինչպես նաև հիսուն և ավելի աշխատողներ ունեցող պետական հատվածի գործատուների համար: Երրորդ փուլում՝ քվոտայի ներդրումից հինգ տարի հետո, քվոտայի պահանջը սահմանվում է հիսուն և ավելի աշխատողներ ունեցող ոչ պետական հատվածի, ինչպես նաև քսան և ավելի աշխատողներ ունեցող պետական հատվածի գործատուների համար:

***Երկրորդ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների բնագավառի բարեփոխումների ապահովման օրենսդրական լուծումները»***

ենթավերնագրում տրվել են ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրենսդրական լուծումների ընդհանրացում ու համակարգում:

Նկատի ունենալով սույն հետազոտության շրջանակներում վերլուծված միջազգային փորձը, Հայաստանում տեղայնացման գնահատման ամփոփ արդյունքները, այդ ուղղությամբ կատարված եզրահանգումներն ու հիմնավորումները, ինչպես նաև իրավիճակային միտումները, միաժամանակ, կարևորելով Հայաստանում սոցիալական ձեռնարկությունների գործարկումը՝ որպես քվոտայի լրացման նոր և առանցքային հնարավորություն, կարելի է օբյեկտիվորեն փաստել, որ սոցիալական ձեռնարկությունների ներդրումը ունի հրատապ անհրաժեշտություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման արդյունավետ գործիքներից ՀՀ-ում կարելի է կիրառել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունող գործատուների ֆինանսավորման գաղափարը: Կարող է կիրառվել նաև հաշմանդամություն ունեցող աշխատողի հարմարեցման ծախսերի փոխհատուցման և հարկերի նվազեցման քաղաքականություն:

Աշխատանքային հարաբերություններում հաշմանդամության առաջացման պատճառների կանխարգելման իրավական ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնների և նորմերի հաստատումը ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: Արդյունքում կամբողջականացվեն հետևյալ իրավական դրույթների պահանջները՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդված, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ և 3-րդ հոդվածներ, ԱՄԿ «Արդյունաբերության և առևտրի մեջ աշխատանքի

տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիայի 3-րդ հոդված, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլուխ:

Ենթավերնագրում տրվել են նաև աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին միասնական նորմերն ու կանոնները ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո այն անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը, որոնք կարիք ունեն համապատասխանացման կամ ուժը կորցրած ճանաչելու:

Աշխատանքի պաշտպանության ոլորտի ամբողջական կանոնակարգման նպատակով անհրաժեշտ է մշակել աշխատանքի պաշտպանության բնագավառի ազգային ծրագիր, որի շրջանակներում ատենախոսության մեջ տրվել է հիմնական միջոցառումների ցանկը:

Մյուս կողմից, վերը նշված օրենսդրական կարգավորման շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրական համակարգի ներդրման հայեցակարգային հիմքերին համահունչ այդ համակարգի իրավական ամբողջական կառուցակարգերի ապահովումը:

**Երրորդ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հայեցակարգային մոդելը»** ենթավերնագրում տրվել են ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անհրաժեշտ բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները:

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունները վկայում են, որ օրենսդրական համապարփակ լուծումների հիմքում անհրաժեշտ է, նախևառաջ, կարգավորել հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, մատչելի միջավայրի ապահովման, կրթության, աշխատանքային գործունեության, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

Ենթավերնագրում տրվել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները:

1-ին կամ 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք պետք է իրավունք ունենան ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում՝ կրթական բոլոր մակարդակներում:

**Եզրահանգումներ** բաժնում տրվել են հետևյալ հիմնական դրույթները՝

1. «Հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը առաջարկվում է կիրառել այն անձանց համար, ովքեր տևական ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր տեսակի բացասական վերաբերմունքի կամ ֆիզիկական արգելքների հետ փոխազդեցության հետևանքով կարող են խոչընդոտել այդ մարդկանց լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին:



2. Անհրաժեշտ են իրավական հիմքեր պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման շրջանակներում առավելապես ոչ թե ակտիվ, այլ պասիվ քաղաքականության իրականացման համար:
3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար միջավայրի մատչելիության հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է «դիզայնի» գործակալների ինստիտուտի ներդրման նպատակով իրավակիրառական արդյունավետության բարձրացում: Մյուս կողմից, ծառայությունների ոլորտում անհրաժեշտ է ներդնել խթանային համակարգի իրավական հիմքեր:
4. ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության իրավական կարգավորման ոլորտը թերի է և ունի բազմակողմանի լրամշակման և համակարգային լուծումների անհրաժեշտություն: Մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության շրջանակներում հիմնադիր հանդիսացող հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է սահմանվի արտոնությունների հստակ համակարգ:
5. Հաշմանդամություն ունեցող անձանց օրենսդրությամբ սահմանվող հարկային արտոնությունների շարքն անհրաժեշտ է լրացնել այդ անձնաց զբաղվածության խթանմանն ուղղված՝ բացի շահութահարկից, այլ հարկատեսակներից, որոշակի լրացուցիչ արտոնություններով: Մասնավորապես, «Ավելացված արժեքի մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքներում նպատակահարմար է սահմանել իրական խթաններ տնտեսվարողների համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու ուղղությամբ:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքն ամրագրող օրենսդրությունը պետք է ապահովի անուղղակի արտոնությունների համակարգ, երբ ավելի փոքր ծախսերով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նյութական, բովանդակային և կազմակերպչական հասանելիությունը խթանվում է կրթական հաստատությունների միջոցով, այլ ոչ թե պետության կողմից ուղղակի ֆինանսավորմամբ հատուկ կրթական հաստատությունների ստեղծմամբ:
7. Հիմնավոր չէ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պետության կողմից կրթության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց տրված արտոնությունները՝ ցերեկային ուսուցման հաշմանդամություն ունեցող անձանց կողմից հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից կենսաթոշակի վճարումը միայն ցերեկային ուսանողների համար: Սահմանափակող հանգամանք է նաև միայն պետական ուսումնական հաստատությունների նախատեսումը՝ բացառելով ոչ պետական ուսումնական հաստատությունները: Վերջիններս հաճախ կարող են լինել էապես ավելի

ճկուն և հարմար՝ հաշմանդամություն ունեցող անձանց ուսումը կազմակերպելու տեսանկյունից:

8. Հաշմանդամություն ունեցող անձնաց խնդիրների լուծման ուղղությամբ նպատակահարմար է պետական բյուջեում լրացուցիչ նպատակային եկամուտների ձևավորման համար ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական մարմնի միջոցով պարբերաբար կազմակերպել ազգային պետական վիճակախաղ:
9. Անհրաժեշտ է վերացնել այն ոչ օբյեկտիվ տարբերակումը, որ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով:
10. Հաշմանդամություն ունեցող անձանց կենսաթոշակների և նպաստների տրամադրման հասցեականության ապահովումը կախված է սոցիալական ծառայությունների նախաձեռնողականությունից: Այս իմաստով, ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման համատեքստում անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական դեպքերի վարումը պետք է իրականացվի առաջնահերթ:
11. Անհրաժեշտ է ընդունել օրենք՝ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության մասին, որի շրջանակներում համապատասխան լուծումները տրված են ատենախոսության երկրորդ գլխում:
12. ՀՀ-ում քվոտայի ներդրման և կիրառման առաջադրված լուծումները գործնականում կարող են ապահովել զբաղվածության խթանում:

**Հավելվածում** բերված է հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման միջազգային փորձի աղյուսակը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրատարակված աշխատություններում.

1. Ա. Ղազարյան, «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Պետություն և իրավունք», թիվ 4(46), Երևան 2009թ., էջ 75-82:
2. Ա. Ղազարյան, «Աշխատանքի և զբաղվածության ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման իրավիճակն ու խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Պետություն և իրավունք», թիվ 2-3(60-61), Երևան 2013թ., էջ 111-120:
3. Ա. Ղազարյան, «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի քվոտայի կիրառման խնդիրները», «Պետություն և իրավունք», թիվ 1(63), Երևան 2014թ., էջ 34-43:
4. Ա. Ղազարյան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման օրենսդրական լուծումները» «Պատմություն և մշակույթ» (հայագիտական հանդես), Ա, Երևան 2014թ., էջ 344-357:

Казарян Арев

## Обеспечение прав лиц имеющих инвалидность в РА

### Резюме

Настоящая диссертация посвящена комплексному и разностороннему анализу области прав лиц имеющих инвалидность. В законодательстве Республики Армения, в плане социальной защиты и социального обеспечения предусмотрена определенная система льгот и гарантий для лиц имеющих инвалидность. Из содержания работы становится очевидным, что в настоящее время в Республике Армения имеются пока еще полностью не раскрытые и не решенные многочисленные проблемы, касающиеся относящиеся всестороннему обеспечению прав лиц имеющих инвалидность, где есть насущная необходимость комплексного анализа, оценки результатов и обеспечения всесторонних решений, представления научно обоснованных предложений, которые могут иметь ценное научно-практическое значение. В Республике Армения в настоящий период государственное регулирование обеспечения прав лиц имеющих инвалидность, в большей мере основана на политике возмещения. Определенная часть прав и гарантий для лиц имеющих инвалидность в Армении не имеют практического применения.

**Объектом** исследования являются проблемы правового регулирования защиты прав лиц имеющих инвалидность, внутрисистемные связи этих прав и социально-экономического развития в Республике Армения.

**Предметом** исследования являются теоретические и практические представления конституционно-правовых и административно-правовых аспектов для лиц имеющих инвалидность, а также определенные предпосылки в практике правового регулирования в Республике Армения.

**Целью** исследования является анализ и оценка законодательства обеспечения прав лиц имеющих инвалидность в Республике Армения и представление практических решений, учитывающие научно обоснованные, испытанные в конституционно-правовой практике других стран и учитывающие особенности нашей правовой системы.

Для достижения указанных целей выдвинуты следующие задачи:

- исследовать теоретические и практические обоснования юридического фундамента института прав лиц имеющих инвалидность, предоставить собственные тезисы;
- предоставить комплексную юридическую характеристику статуса лиц имеющих инвалидность;

- анализировать законодательство обеспечения прав лиц имеющих инвалидность в Республике Армения в сравнении с требованиями международного права и выявлять новые, непримененные подходы;
- выявить современные проблемы и решения социальной интеграции лиц имеющих инвалидность в Республике Армения;
- выявить законодательные пробелы и несоответствия прав лиц имеющих инвалидность в Республике Армения;
- обработать законодательные и практические решения обеспечения прав для лиц имеющих инвалидность в Республике Армения.

В процессе исследования автор использовал различные методы, в том числе: исторические, диалектические, аналитические, юридическо-сравнительные, логико-лингвистические, системно-структурные и др. В результате одновременного применения этих методов было возможно достичь реализации цели диссертации и решения выдвинутых задач.

**Научная новизна** состоит в том, что диссертация наряду с отечественными исследованиями в первый раз систематизированно и разносторонне выявляет проблемы и решения прав лиц имеющих инвалидность в условиях строительства правовой страны в условиях рыночных отношений. В первые делается попытка исследовать и осмыслить институт прав лиц имеющих инвалидность как явление и осуществить решения правового регулирования в Республике Армения, предоставляя юридические определения соответствующих понятий, выявляя существующие неопределенности и пробелы, что дало возможность обеспечить принципиально новые решения.

Исходя из исследований вышеприведенных задач, были обработаны и представлены правовые и практические предложения, для эффективного совершенствования прав лиц имеющих инвалидность в Республике Армения.

Основные положения диссертации рассмотрены на заседании кафедры конституционного права факультета правоведения ЕГУ и отражены в опубликованных автором научных статьях.

Диссертация состоит из введения, трех глав, содержащих восемь параграфов, заключения, списка литературы и приложения.

Arev Ghazaryan

## Provision of the rights of persons with disabilities in RA

### Summary

The dissertation is dedicated to the complex and comprehensive analysis of the rights of persons with disabilities. The legislation of the Republic of Armenia, in terms of social protection and social security system, provides certain benefits and guarantees for persons with disabilities. From the content of the work it's obvious that at present, in the Republic of Armenia there are yet many unrevealed and unsolved issues, related to comprehensive support of the rights of persons with disabilities and there is an urgent need for a comprehensive analysis, evaluation of results and secure comprehensive solutions of presented scientifically proved proposals that may have valuable scientific and practical importance. At present, in the Republic of Armenia, the state regulation of ensuring the rights of persons with disabilities is mostly based on the compensation policy. In Armenia a certain part of the rights and guarantees for persons with disabilities have no practical appliance.

**Research object:** issues of legal regulation for ensuring the rights of persons with disabilities, intersystem communication of these rights and socio-economic development in the Republic of Armenia.

**Research subject:** theoretical and practical notions (ideas) about the constitutional-legal and administrative-legal aspects of persons with disabilities, as well as certain prerequisites in the practice of legal regulation in the Republic of Armenia.

**An objective** is to research and to evaluate legislation of ensuring the rights of persons with disabilities in the Republic of Armenia, to present practical, solutions considering the scientific-based and tested in the constitutional and legal practice in other countries, taking into account the features of our legal system.

To achieve these objectives the following tasks are put forward:

- research the theoretical and practical proposition of the legal foundation of the Institute of the rights of persons with disabilities, to provide their own theses,
- to provide the comprehensive legal characteristics of the status of persons with disabilities,
- to analyze the legislation of ensuring the rights of persons with disabilities in the Republic of Armenia in comparison with the requirements of the international law and to bring out new, not used approaches,

- to bring out nowadays issues and the solutions of social integration of persons with disabilities in the Republic of Armenia,
- to bring out the legislative issues and mismatches of the rights of persons with disabilities in the Republic of Armenia,
- to identify legal and practical solutions for ensuring the rights of persons with disabilities in the Republic of Armenia.

During the research the author used a variety of methods, including: historical, dialectical, analytical, legal-comparative, logical-linguistic, systemic-structural and others. As a result of the simultaneous use of these methods, it was possible to achieve the objective of the dissertation and the solutions of put forward tasks.

The scientific innovation is that the thesis, together with native researches for the first time systematically and versatile identifies problems and solutions of the rights of persons with disabilities in the condition of building the country's legal market relations. For the first time studying and proving the institute of the rights of persons with disability as a phenomenon and make decisions of legal regulation in the Republic of Armenia, providing legal definitions of the relevant concepts, identifying the existing uncertainties and gaps, which gave the opportunity to provide the innovative solutions.

On the assumption of the tasks above, there were processed and were presented legal and practical suggestions for effective improvement of the rights of persons with disabilities in the Republic of Armenia.

The main provisions of the thesis were discussed at the meeting of the Department of Constitutional Law and the Faculty of Law of Yerevan State University and are were reflected in the scientific articles published by the author.

The thesis consists of introduction, three chapters, containing eight paragraphs, conclusion, appendix and bibliography.